Հաստատում եմ՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
ռեկտոր տեխնիկական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ռ. ԴԱՎԹՅԱՆ
«29.06.2026թ.»

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«Բողոքարկման ինստիտուտը վարչարարությունում և վարչական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Էլինա Կարենի Գեղամյանի (այսուհետ՝ Հեղինակ) «Բողոքարկման ինստիտուտը վարչարարությունում և վարչական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը (այսուհետ՝ ատենախոսություն) քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի նիստում (26.06.2026, արձանագրություն N 3), մասնակցությամբ ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Թ. Շաքարյանի, ի.գ.դ., պրոֆեսորներ Գ.Դանիելյանի, Ա. Խաչատրյանի, Ա.Ղամբարյանի, Հ. Հակոբյանի, ի.գ.թ. դոցենտներ Ա. Ասատրյանի և Լ.Հակոբյանի, ի.գ.թ. Մ.Մկրտչյանի, Ա.Առաքելյանի և նիստի քարտուղար՝ Ա.Հովհաննիսյանի:

Ատենախոսության թեման նվիրված է վարչարարությունում և վարչական դատավարությունում բողոքարկման ինստիտուտի, մասնավորապես՝ վարչարարության բողոքարկման ինստիտուտի զարգացման էվոլյուցիայի, ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում դրա ունեցած բովանդակության, վարչարարության բողոքարկման իրավունքի էության, իրացման շրջանակների, բողոքարկման օբյեկտների, սուբյեկտների, վարչարարության բողոքարկման համատեքստում հանրային շահի պաշտպանությունն ապահովող գործիքակազմերի, ինչպես նաև վարչարարության բողոքարկման արդյունավետության հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Թեկնածուական ատենախոսության արդիականության առնչությամբ Հեղինակի հիմնավորումները ամբողջական են և վերաբերելի, և Հեղինակին հաջողվել է անհրաժեշտ փաստարկներով հիմնավորել թեմայի արդիականությունը: Մասնավորապես, ըստ հեղինակի՝ թեպետ վարչարարության բողոքարկման ինստիտուտը վարչաիրավական հարաբերություններում և, ընդհանուր առմամբ, ժողովրդավարական պետությունում հիմնաքարային նշանակություն ունի, դեռևս հայրենական գրականությունում համապարփակ ուսումնասիրության առարկա չի դարձել: Ընդ որում, չնայած արտասահմանյան իրավական դոկտրինում քննարկվող ինստիտուտի Հեղինակի կողմից առանձնացված որոշակի հարցեր լայնորեն ուսումնասիրվել են, սակայն թեմայի առանձին հարցեր համապարփակ ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել, ինչը կարևոր նշանակություն ունի ոչ միայն վարչարարության բողոքարկման ինստիտուտի տեսական հիմքերի ամբողջական և համարժեք բացահայտման, այլև իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման և արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Հայաստանի Հանրապետությունում վարչարարության բողոքարկման առնչությամբ առկա համակարգային և հիմնարար խնդիրները, վարչարարության բողոքարկման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը, վարչարարության բողոքարկման առնչությամբ թե՛ ներպետական և թե՛ միջազգային մակարդակում վերջին տարիներին ի հայտ եկած նոր և համարժեք լուծում պահանջող խնդիրները ևս պայմանավորում են ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը և գիտագործնական նշանակությունը: Այսպիսով, ատենախոսության թեման ոչ միայն խիստ արդիական է, իսկ թեմայի շրջանակում ներառվող որոշ հիմնահարցերի հետազոտությունը՝ նաև անհրաժեշտ:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել ապահովել ընտրված թեմային առնչվող առավել խնդրահարույց և գիտական մակարդակում պատշաճ ուսումնասիրություն պահանջող հարցադրումների քննարկումը:

Ներկայացված աշխատանքը կազմված է ներածությունից, 3 գլխից, որոնք ընդհանուր ներառում են 8 պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ներածությունում Հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ներկայացրել մշակվածության աստիճանը, հետազոտության առարկան, նպատակը և խնդիրները, մեթոդաբանական հիմքը, նորմատիվ-իրավական և աղբյուրագիտական հիմքերը, գիտագործնական նշանակությունը, արդյունքների հիմնավորվածությունն ու արժանահավատությունը, արդյունքների փորձարկումը, առաջադրել է գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:

Առաջին գլուխը՝ «Վարչարարության բողոքարկման ինստիտուտի ծագումը, զարգացման էվոլյուցիան և իրացման երաշխիքները» վերտառությամբ, կազմված է

երեք պարագրաֆից: Առաջին պարագրաֆում՝ *«Վարչարարության բողոքարկման ինստիտուտի ծագումը, զարգացման էվոլյուցիան և իրացման երաշխիքները»* վերտառությամբ, անդրադարձ է կատարվել վարչարարության բողոքարկման ինստիտուտի ձևավորման և զարգացման համաշխարհային փորձին, զարգացման փուլերին, դրա զարգացման ներկայիս փուլին բնութագրական խնդիրներին:

Երկրորդ պարագրաֆը՝ *«Վարչարարության բողոքարկման իրավունքի՝ որպես պատշաճ վարչարարության և դատական պաշտպանության հիմնարար իրավունքների բաղադրատարրի էությունը և իրացման շրջանակները»* վերտառությամբ, նվիրված է վարչարարության բողոքարկման իրավունքի՝ դրա էության, բաղադրատարրերի, բողոքարկման օբյեկտների շրջանակի և բողոքարկման սահմանների բացահայտմանը:

Երրորդ պարագրաֆում՝ *«Վարչարարության բողոքարկման սուբյեկտները»* վերտառությամբ, անդրադարձ է արվել բողոքարկման սուբյեկտների շրջանակի որոշման և բողոքարկման իրավունքի առկայությունը փաստելու հիմքում դրվող չափանիշներին:

Երկրորդ գլուխը՝ *«Հանրային շահի պաշտպանությունը վարչարարության բողոքարկման համատեքստում»* վերտառությամբ, կազմված է երեք պարագրաֆից:

Առաջին պարագրաֆը՝ *«Հանրային շահի հասկացությունը և պաշտպանության մոդելները վարչարարության բողոքարկման համատեքստում»* վերտառությամբ, նվիրված է վարչարարության բողոքարկման համատեքստում «հանրային շահ» հասկացության իրավաբանորեն արժևորման չափանիշների վերհանմանը:

Երկրորդ պարագրաֆը՝ *«Խմբային հայցը և հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկումը»* վերտառությամբ, նվիրված է հանրային շահի պաշտպանության երաշխավորման համատեքստում խմբային հայցի և հասարակական կազմակերպությունների կողմից վարչարարության բողոքարկման հիմնախնդիրներին:

Երրորդ պարագրաֆում՝ *««Դատարանի ընկերոջ» և մասնավոր որոշման ինստիտուտները հանրային շահի պաշտպանության համատեքստում»* վերտառությամբ, անդրադարձ է արված «դատարանի ընկերոջ» ինստիտուտի հետազոտմանը և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարությունում դրա ներդրման անհրաժեշտության հիմնավորմանը, ինչպես նաև հանրային շահի պաշտպանության երաշխավորման համատեքստում մասնավոր որոշման ինստիտուտի հիմնահարցերի հետազոտությանը:

Ատենախոսության 3-րդ՝ *«Վարչարարության բողոքարկման ինստիտուտի արդյունավետությունը»* վերտառությամբ գլուխը կազմված է երկու պարագրաֆներից:

Առաջին պարագրաֆը՝ *«Վարչարարության բողոքարկումը՝ որպես իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց»* վերտառությամբ, նվիրված է բողոքարկման ինստիտուտի քննարկմանը՝ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի համատեքստում, և չափանիշների վերհանմանը, որոնց պետք է բավարարի վարչական կարգով բողոքարկման համակարգը՝ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց համարվելու տեսանկյունից»:

Երկրորդ պարագրաֆը՝ *«Վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտը վարչարարության բողոքարկման իրավունքի արդյունավետության համատեքստում»* վերտառությամբ, անդրադարձ է կատարում վարչարարության բողոքարկման արդյունավետության համատեքստում վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտի էությանը, իրավական բնույթին, վարչական ակտի կատարման կասեցման համատեքստում շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ, վարչական դատավարությունում ներդրման ենթակա գործիքակազմերին:

Եզրակացության մեջ ամփոփվել են կատարված հետազոտության արդյունքները՝ եզրահանգումների տեսքով:Հավելվածում ամփոփվել և քանակական ու որակական վերլուծության են ենթարկվել Հեղինակի կողմից Հայաստանի Հանրապետության 35 վարչական մարմիններին, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդին արված՝ տեղեկատվության տրամադրման վերաբերյալ հարցումների արդյունքները:

Աշխատանքը շարադրված է գիտական պատշաճ լեզվաոճով, այն գրեթե զերծ է թերի, բազմիմաստ ու խրթին մտքերից, լեզվական ու քերականական կանոնների շեղումներից, սակավաթիվ են նաև վրիպակները:

Ատենախոսության ձևավորումը համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից սահմանված կանոններին: Այդ կանոններին համապատասխանում են նաև աշխատության կառուցվածքը և ծավալը:

Հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող մասնագիտական գրականություն, լայնորեն վերլուծել է թեմային առնչվող ՄԻԵԴ դատական ակտերը, «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի, Եվրոպական հանձնաժողովի և այլ հեղինակավոր միջազգային կազմակերպությունների և դրանց խորհրդատվական մարմինների՝ հետազոտության առարկային առնչվող վերլուծությունները, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, Եվրոպական միության արդարադատության դատարանի, արտասահմանյան երկրների բարձրագույն դատական ատյանների ակտերը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերն ու պրակտիկան, ինչը հնարավորություն է տվել հեղինակին առավելագույնս համալիր

անդրադառնալու խնդրո առարկա հարցադրումներին և հարստացնել կատարված հետազոտությունը:

Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից հավուր պատշաճի օգտվելու և ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողություններ: Բացի այդ, ատենախոսությունում նկատվում է հեղինակի պատշաճ իրազեկվածությունը քննարկվող նյութին առնչվող տեսական աղբյուրների, գիտական տեսակետների ու միջազգային պրակտիկայի վերաբերյալ:

Միաժամանակ, կարծում ենք, ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից, որոնց առնչությամբ մեր նկատառումները ներկայացված են ստորև.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

1.1. Ատենախոսության գիտական արժեքն ավելի ընդգծված կլիներ, եթե Հեղինակն անդրադարձ կատարեր նաև վարչական ակտի անբողոքարկելիության ինստիտուտին, դրա առնչությամբ առկա հիմնախնդիրներին, սահմանված ժամկետում վարչարարության առնչությամբ բողոք չներկայացնելու իրավական հետևանքներին, այդ թվում՝ վարչական ակտի կատարման վրա դրանց ազդեցության տեսանկյունից:

1.2. Ատենախոսության գիտական արժեքն ավելի բարձր կլիներ, եթե Հեղինակն անդրադառնար նաև վարչական լռության ինստիտուտի համատեքստում վարչական բողոքարկման վարույթում պոզիտիվ ֆիկցիայի կիրառմանը որպես բողոքարկման ինստիտուտի արդյունավետության բարձրացման և բողոքների քննության գործընթացի էական բարելավման երաշխիքի: Նշված հիմնախնդրի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունների բացակայության տեսանկյունից վերը նշված հիմնախնդրի քննարկումն առավել քան արդիական է:

1.3. Ատենախոսության տարբեր հատվածներում որոշ հասկացություններ, ինչպիսին է, օրինակ, արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի իրավունքը, նկարագրելու համար Հեղինակի կողմից օգտագործվում են տարբեր եզրույթներ: Մյուս կողմից, Հեղինակն ատենախոսության որոշ հատվածներում խոսում է վարչարարության բողոքարկման իրավունքի, այլ դեպքերում՝ բողոքարկման ինստիտուտի մասին, մինչդեռ ատենախոսության շարադրանքի այլ հատվածներում պարզ չէ՝ քննարկման առարկան բողոքարկման իրավունքի՞, թե՞ ինստիտուտի հիմնահարցերն են: Աշխատանքն էականորեն կշահեր, եթե Հեղինակի կողմից միևնույն հասկացության բնութագրման համար կիրառվեր միատեսակ տերմինաբանություն, և ատենախոսությունում առավել հստակ լիներ ուսումնասիրվող հարցերի տարանջատումը՝ դրանց բողոքարկման իրավունքի կամ ինստիտուտին վերաբերելիության համատեքստում:

2. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

1. Հեղինակն որպես պաշտպանության առաջադրված գիտական նորույթ առաջարկում է վարչական բողոքարկման սուբյեկտների իրավական շահագրգռվածության ստուգման նոր եռաստիճան չափանիշ՝ հիմնվելով վարչարարության ազդեցության *իրական, կոնկրետ և նշանակալի* լինելու վրա: Թեև այս չափանիշների առանձնացումն ինքնուրույն, ինքնատիպ, և նաև որոշակի առումով գիտական նորույթ հանդիսացող եզրահանգում է, ատենախոսությունում բավարար չափով հստակեցված չէ, թե ինչպես է բողոքարկող սուբյեկտի իրավական կարգավիճակի վրա վարչարարության «նշանակալի» ազդեցության չափանիշը հարաբերակցվում ներպետական իրավական դոկտրինում և դատական պրակտիկայում արմատավորված «սուբյեկտիվ իրավունքի խախտման» հետ, մասնավորապես՝ այն համատեքստում, երբ վարչարարությամբ անձի իրավունքի խախտման փաստն առկա է, սակայն այդ խախտման նշանակալիությունը դեռևս քննարկման ենթակա է: Եթե վարչական ակտն անձի սուբյեկտիվ իրավունքը խախտել է, սակայն այդ խախտումը, ըստ դատարանի կամ վարչական մարմնի գնահատման, չի որակվում որպես «նշանակալի», արդյո՞ք սա չի հանգեցնում անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման: Նկատառումը վերաբերում է նաև այն դեպքերին, երբ վարչարարության բողոքարկման հիմքում ոչ թե իրավունքի խախտման առկայությունն է, այլ այդպիսի խախտման վտանգը: Ատենախոսությունը կշահեր, եթե այս հարցադրումն ատենախոսության շրջանակում առավել հասցեական և հանգամանալից պարզաբանում ստանար:

2. Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում Հեղինակը հետազոտության առարկա է դարձրել հասարակական կազմակերպությունների կողմից հանրային շահի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման հիմնահարցերը՝ ի թիվս այլնի, առանձնացնելով «հանրային շահի պաշտպանությամբ իրավական շահագրգռվածության» չափանիշները որպես հասարակական կազմակերպությունների կողմից վարչարարության՝ հանրային շահի պաշտպանության նպատակով բողոքարկման թույլատրելիության պայմաններ: Վերջինս առաջադրվել է որպես գիտական նորույթ:

Ատենախոսության քննարկվող պարագրաֆում առանձնացված հիմնահարցերը վարչական դատավարությունում, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորման համատեքստում առանձնահատուկ կարևորություն ու արդիականություն ունեն, և Հեղինակին, ընդհանուր առմամբ, հաջողվել է ընտրված հարցադրումների առնչությամբ ինքնատիպ և գիտական նորույթ հանդիսացող եզրահանգումներ ներկայացնել:

Անդրադառնալով հասարակական կազմակերպությունների կողմից հանրային շահի պաշտպանության նպատակով դատարան դիմելու և «actio popularis» հայցատեսակների հարաբերակցությանը, Հեղինակն արձանագրել է հետևյալը. «Actio popularis»-ն իր դասական՝ ցանկացած անձի կողմից հանրային շահի պաշտպանության վարչարարության բողոքարկման իմաստով, ընդունելի չի կարող լինել ու չի կարող կիրառվել վարչական դատավարությունում, քանի որ այն կհանգեցնի ոչ միայն իրավունքի գերակայության, իրավական որոշակիության, վարչական ակտի հասցեատերերի իրավաչափ ակնկալիքների, իրավունքների և օրինական շահերի խախտման, այլև իրավական անվտանգության սպառնալիք դառնա և հանգեցնի դատարանների էական ծանրաբեռնմանը այնպիսի հայցերով, որոնք ներկայացնող սուբյեկտները չունեն իրավական որևէ շահագրգռվածություն: Ավելին, հասարակական կազմակերպությունների դատարան դիմելու առաջարկվող մոդելը պետք է ձևավորվի որպես ոչ թե «actio popularis»-ի դրսևորում, այլ հակառակ համատեքստում՝ կիրառելի լինելով միայն այն բացառիկ իրավիճակներում, երբ հիմնավորված է հասարակական համապատասխան կազմակերպության որոշակի, ակնհայտորեն հիմնավորված, իրական շահագրգռվածությունը և վիճարկվող վարչարարության՝ հանրային շահի պաշտպանության նպատակով բողոքարկման ենթակա լինելը:»:

Մյուս կողմից, սակայն, Հեղինակն անդրադարձ չի կատարել այն հարցին, թե առաջարկվող մոդելի պայմաններում, երբ ներկայումս գործող կարգավորումների համեմատությամբ հասարակական կազմակերպություններին վարչարարության բողոքարկման իրավունք է առաջարկվում ընձեռել անհամեմատ առավել լայն ոլորտներում, ինչպե՞ս է երաշխավորվելու հասարակական կազմակերպությունների կողմից բողոքարկման իրավունքի հնարավոր չարաշահումների (օրինակ՝ սոցիալ-տնտեսական կամ ռազմավարական նշանակություն ունեցող խոշոր նախագծերի կասեցման նպատակով բողոքարկումները) կանխարգելումը:

Չնայած Հեղինակն առանձնացնում է հանրային շահի պաշտպանության նպատակով բողոքարկման իրավունքի առկայության հիմքում դրվող չափանիշները՝ բողոքարկման նպատակը այնպիսի հանրային շահի առկայությունը լինելը, որի պաշտպանությամբ արդարացի շահագրգռված է տվյալ հասարակական կազմակերպությունը, և վարչարարության անհատականացված, կոնկրետ հասցեատիրոջ և/կամ անհատական մակարդակում վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտի բացակայությունը, ատենախոսության շարադրանքում, կարծում ենք, համապարփակ քննարկման առարկա չի դարձվել այն հարցը, թե ինչպես է առաջարկվող կառուցակարգի պայմաններում կանխվելու գործադիր իշխանության քաղաքականության վիճարկումը վարչական դատարանում՝ այնպիսի հիմքերով, որոնք գործադիր իշխանության հայեցողության տիրույթում են: Այս համատեքստում աշխատանքը կշահեր, եթե առավել

մանրամասն ու հասցեական պատասխան տար այն հարցին, թե ո՞րն է հանրային շահի պաշտպանությամբ վարչարարության բողոքարկման և «գաղափարական հայցվորների» միջև օբյեկտիվ և չափելի սահմանը, և թե առաջարկվող մոդելի պայմաններում ինչպես է ապահովվելու գործադիր իշխանության՝ կարևորագույն նշանակություն ունեցող ենթակառուցվածքային կամ տնտեսական նախաձեռնությունների պատշաճ կենսագործման, մյուս կողմից՝ դրանց առնչությամբ առկա իրական, պաշտպանության ենթակա հանրային շահերի հավասարակշռությունը՝ առանց հանգեցնելու այնպիսի իրավիճակի, երբ բողոքարկման իրավունքն իրացվում է այդպիսի նախագծերի ժամանակին կենսագործումն իրականացնելու հաշվին:

3. Ատենախոսության առաջին գլխի 2-րդ պարագրաֆում քննարկման առարկա դարձնելով վարչարարության բողոքարկման օբյեկտների հիմնահարցերը, Հեղինակն արձանագրել է հետևյալը. «Վարչարարության բողոքարկման օբյեկտների շրջանակի որոշման՝ վերը հիշատակված չափանիշների, Սահմանադրական դատարանի ու ՄԻԵԴ քննարկվող դիրքորոշումների համատեքստում ակնհայտ է, որ անկախ նրանից, թե գործող օրենսդրությամբ վարչարարության դրսևորումների ինչ սահմանափակումներ կամ հասկացություններ են նախատեսված, և թե դատարան դիմելու կամ վարչական կարգով բողոքարկման իրավունքի բնորոշումն օրենսդրական մակարդակով բողոքարկման ինչ օբյեկտների թվարկում է ներառում, վարչարարության բողոքարկման իրավունքը չի կարող սահմանափակվել՝ զուտ այն հանգամանքից ելնելով, որ բողոքարկման օբյեկտը չի համապատասխանում օրենսդրությամբ սահմանված կոնկրետ ձևին: Վարչարարության բողոքարկման իրավունքի առկայությունը չպետք է կապվի ներպետական համակարգում վարչարարություն հասկացության բնորոշման կամ վարչարարության դրսևորման ձևերի՝ օրենսդրորեն սահմանափակված շրջանակի հետ, և բողոքարկման օբյեկտների շրջանակը պետք է որոշվի վարչական մարմնի՝ արտաքին ներգործություն ունեցող գործունեության որևէ դրսևորման՝ անձի իրավունքների վրա ազդեցության և այդ ազդեցության՝ իրավաբանորեն արժևորվող նշանակալիության տեսանկյունից:»:

Հեղինակն անդրադարձել է նաև քննարկվող հարցին վերաբերելի՝ Վճռաբեկ դատարանի, Սահմանադրական դատարանի ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի ներկայիս կարգավորումներին: Հեղինակի վերոնշյալ եզրահանգումից և ատենախոսության համապատասխան հատվածի շարադրանքից, սակայն, պարզ չէ՝ արդյո՞ք Հեղինակն այդպիսով առաջարկում է սահմանել վարչարարության բողոքարկման՝ ներկայումս օրենսդրությամբ սահմանված և իրավակիրառ պրակտիկայում ամրապնդված օբյեկտներից առավել լայն շրջանակ, թե՞ առաջարկվող եզրահանգումն ավելի շատ ունի տեսական, ուղենիշային բնույթ՝

միտված ցույց տալու, որ վարչարարության առանձին դրսևորումները բողոքարկման ենթակա լինելու հարցը որոշելիս «վարչարարություն» հասկացությունը պետք է ստանա առավել լայն մեկնաբանություն:

4. Ատենախոսության երրորդ գլխի 2-րդ պարագրաֆում Հեղինակը, քննարկման առարկա դարձնելով վարչարարության բողոքարկման արդյունավետության համատեքստում վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտի իրավական բնույթը և ամրագրման կառուցակարգը, արձանագրել է, որ հայցվորից զատ դատավարությանը մասնակցող անձանց կամ դատավարությանը դեռևս մասնակից չդարձված անձանց, ում իրավունքներին և օրինական շահերին առնչվում է վիճարկվող ակտը, իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից վերջիններիս համար պետք է երաշխավորված լինի վարչական ակտի կատարումը կասեցնելու որոշման դեմ պաշտպանվելու հնարավորությունը՝ ի թիվս այլնի, առաջարկելով նախատեսել վարչական ակտի կատարման կասեցմամբ պատճառված վնասի հատուցման և հակընդդեմ ապահովման կառուցակարգեր: Վարչական դատավարությունում ոչ թե հայցվորի, այլ երրորդ անձանց համար այսպիսի կառուցակարգի նախատեսման առաջարկը որոշակի առումով նորույթ է վարչական դատավարության գիտությունում, և Հեղինակի՝ այս առնչությամբ փաստարկները կարող են ծանրակշիռ նշանակություն ունենալ ոչ միայն վարչական ակտի կատարման կասեցման ինստիտուտի առնչությամբ բարեփոխումների, այլ նաև բարենպաստ վարչական ակտի հասցեատիրոջ իրավունքների, օրինական շահերի, այդ թվում՝ լեգիտիմ ակնկալիքների պաշտպանության երաշխավորման համատեքստում: Այս տեսանկյունից, կարծում ենք, աշխատանքն էականորեն կշահեր, եթե Հեղինակն առավել մանրամասն քննարկման առարկա դարձներ վարչական դատավարությունում իր կողմից առաջարկվող համատեքստում հակընդդեմ ապահովման և հայցի ապահովմամբ պատճառված վնասի հատուցման կառուցակարգերի ներդրման հնարավորությունը, միևնույն ժամանակ, անշուշտ, դուրս չգալով ուսումնասիրության առարկայի շրջանակներից:

Այս համատեքստում աշխատանքը կշահեր, եթե Հեղինակը քննարկման առարկա դարձներ նաև կասեցման ինստիտուտի համատեքստում օրենսդրական այն բացառությունները, որոնց ամրագրման օրենսդրական փոփոխությունների պատմությունը ցույց է տալիս դրանից ժամանակագրական առումով ընդլայնման միտում, որոշ դեպքերում՝ առանց համապատասխան հիմնավորումների՝ վարչարարության, այդ թվում՝ բողոքարկման, արդի ցածր որակի համատեքստում: Մասնավորապես, նշվածը վերաբերում է օրինակ 2026 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած չվճարված հարկային պարտավորությունների գանձման որոշման վիճարկման բացառությանը:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ հիշյալ դիտարկումներն ու նկատառումները, այնուհանդերձ, գտնում ենք, որ հեղինակը կատարել է ծավալուն, գիտական արժեք ունեցող աշխատանք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումները՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Էլինա Կարենի Գեղամյանի «Բողոքարկման ինստիտուտը վարչարարությունում և վարչական դատավարությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով՝ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, վերոհիշյալ նկատառումներն առավելապես միտված են ընտրված թեմայի առնչությամբ Հեղինակի հետագա հետազոտությունների ուղենշմանը և չեն նսեմացնում ատենախոսության արժեքը, իսկ ատենախոսության Հեղինակն արժանի է ***ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում»*** մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՀ պետական կառավարման իրավագիտության
ամբիոնի վարիչ, պատվավոր պրոֆեսոր,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ **Թ.Ա.ՇԱՔԱՐՅԱՆ**

Նիստի քարտուղար՝ **Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Ամբիոնի վարիչ Թ. Շաքարյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար
Հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ս. Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**